Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2152

Ս. ԶԱՒՐԲԵԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՒՂԱՑԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

1690

63
Զ-32

Թիֆլիզ

14716

12 APR 2013

ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՆԴՐՄԷՍ“ Մաղաքեան փող. 5.

1906 (185)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1166-2009

63
Ջ-32

15 APR 2009

04 AUG 2010

ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՒՂԱՑԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ.

Մի քանի խօսք

Երբեք, կարծում ենք, այնքան մենք չենք զգացել մեր տգիտութիւնը հողագործ գիւղացուն վերաբերեալ հարցերի նկատմամբ, ինչքան ներկայումս։ Զուրկ լինելով մեր տնտեսական կեանքին վերաբերող ամենատարրական տեղեկութիւններից, մենք անկարող ենք կանգնել փաստական հողի վրայ այն հաղւագիւտ դէպքերում, երբ հասարակութիւնը միջամտում է գիւղացու կեանքում, նրան ոեէ օգնութիւն հասցնելու համար։ Գիւղական կեանքին վերաբերեալ ընդհանուր բարեփոխութիւններ ծրագրելիս՝ մենք ակամայ հիմնում ենք մեր դատողութիւնները տեսական հողի վրայ, ընդհանրացնում ենք Ռուսաստանին, Եւրոպային առանձնայատուկ փաստերը։

Երկու դէպքումն էլ հետեանքները լինում են ապրաւարար։

Անցեալում, երբ այլ և այլ առաջարկութիւնները պատում էին գլխաւորապէս «բարի ցանկութիւնների» շուրջը, ոչ-ճիշտ փաստերի վրայ հիմնւած ծրագիրները մնում էին անհետեանք, դէթ չէին կարող հասցնել լուրջ վնաս։

Այլ է դրութիւնը ներկայումս, երբ բարենորոգչական գոյն ունեցող առաջարկութիւններից շատերը իրականանալու են կեանքի մէջ։

Թէ աշխատաւոր դասի և թէ մեր երկրի առաջադիմութեան շահերը ընդհանրապէս պահանջում են, որպէս զի մեր գիւղական կեանքում մտցւելիք փոփոխութիւնները հիմնւած լինեն ճիշտ փաստերի վրայ, բղխեն մեր կեանքի հասունացած պահանջներից։

Ահա այդ պահանջին դէթ փոքրիկ չափով բաւարարութիւն տալու համար է, որ կազմւում է այս նախագիծը՝ առանձին տետրակով տպագրւած հարցացուցակների հետ միասին։

Մենք համամիտ չենք բոլորովին, մեզ դիմողներից շատերի հետ, որոնք կարծում են, թէ մի քանի գիւղ թռուցիկ կերպով հարցափորձի ենթարկելով, մի քանի շաբաթ գիւղերում պտտելով, կարելի է քիչ-շատ լրիւ գաղափար կազմել մեր գիւղերի տնտեսական կեանքի մասին։ Դա շատ աւելի բարդ և դժւար է, քան թէ երևակայում են նոր սկսողները. դժւար է, մանաւանդ, Կովկասում, ուր աշխարհագրական, ազգագրական, կենցաղավարական և այլ պայմանները ներկայացնում են այնքան բազմատեսակութիւն, այնպիսի ինքնուրոյնութիւն։

Յամենայն դէպս՝ «լաւ է քիչ բան գիտենալ, քան թէ ոչ մի բան», և մենք խորին կերպով համոզւած ենք, որ այն աշխատանքը, որ կը թափէ ամեն մէկը մեր գիւղական կեանքը ուսումնասիրելով, զուր չի անցնի ոչ աշխատաւոր գիւղացու տնտեսական կացութիւնը պարզելու և ոչ իրա՝ ուսումնասիրողի, աշխարհահայեացքի լայնացման տեսակէտից։

Եթէ յաջողւի ամփոփել և, մանաւանդ, դասաւորել այն տեղեկութիւնները, որ կը հաւաքւեն մեր երկրի զանազան վայրերում, համապատասխան ներքևում բերւած հարցացուցակների, կարելի կը լինի կազմել մի ամփոփ—թէկուզ և մի քիչ աղօտ—գաղափար մեր կեանքի ընդհանուր տնտեսական պայմանների մասին։

Վաղուայ մեր անելիք բարեփոխութիւնների նկատմամբ՝ դեկավարւելով աւելի առաջադէմ երկիրների մշակած հայեցակէտներով, մենք, այնուամենայնիւ, յենւած կը լինենք մեր իրական կեանքի պահանջների վրայ, կ'ունենանք անհրաժեշտ չափով թւեր մեր առաջ դրւած կոնկրէտ հարցերին պատասխանելու համար։

Ոչ-պակաս գնահատելի կը լինի նիւթերի հաւաքումը և իրենց՝ ուսումնասիրողների անհատական տեսակէտից։ Համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում հետազօտողները ոչ միայն ձեռք կը բերեն որոշ փորձառութիւն իրենց ապագայ աշխատանքների համար, այլ և կեանքի մէջ կը տեսնեն շատ բաներ, որոնց մասին առաջ երբէք չէին կասկածել, կը գտնեն բազմաթիւ կապեր ու սերտ ներդաշնակութիւն առօրեայ երևոյթների ու նրանց ոռնմանող պատճառների մէջ։ Անցնելով գիւղից-գիւղ, դիմելով հողագործից խաշնարածին, նրանք կը ճանաչեն մի քիչ մեր երկիրը, յարգանքի և ակնածութեան զգացմունքով կը լցւեն դէպի

այն անկիրթ գիւղացին, որը իր հոտառութեամբ ու դարերի ընթացքում ձեռք բերած փորձառութեամբ՝ կարողացել է այդքան թափանցել բնութեան գաղտնիքների խորքը։ Վերջապէս, մօտիկից ճանաչելով մեր ժողովուրդը, ուսումնասիրողները կ'իւրացնեն մարդկային բարոյական հարստութեան մի նոր գոհար՝ կը սիրեն—անկեղծ, անշահ սիրով կը սիրեն այն ժողովուրդը, որը ծնունդ ու սնունդ է տւել մեզ, որը իր կռացած ուսերի վրայ է տարել մեր կեանքի ծանրութիւնը և, չը նայած պատմական ու հասարակական դժոխային պայմանների, կարողացել է դեռ ևս իր տխուր ու խելօք աչքերում պահել այնքան ինքնավստահութիւն, այնքան հաւատ ու լաւատեսութիւն դէպի երջանիկ և ազատ ապագան ..

Գալով ուսումնասիրութեան ձեւին (մեթոդին), մենք դժւարանում ենք կանգ առնել մինչև օրս գոյութիւն ունեցող և գործադրւող ձևերից ոևէ մէկի վրայ։ Եւրոպական պետութիւնները իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը առնում են գլխաւորապէս պարբերաբար կատարւող ժողովրդագրութիւնների միջոցաւ, երբ ցուցակագրւում է ամբողջ ազգաբնակութիւնը։ Մի քիչ այլ ձև է գործածում ներքին գործոց նախարարութիւնը Ռուսաստանում, ուր բոլոր շինական վարչութիւններից պահանջւում են պատասխաններ հողերի, անասունների, բերքի և այլ կարևոր հարցերի մասին։

Այս լայն մասսայական ձևը ոչ միայն ֆիզիկապէս դուրս է մեր կարողութիւնից, այլ և տեղիք է տալիս լուրջ սխալների, քանի որ ստացած պատասխանները դժւար է կոնտրոլի ենթարկել...

Զեմստվոները Ռուսաստանում տասնեակ տարիների ընթացքում ժողովել են շատ գնահատելի և լրիւ տեղեկութիւններ յատուկ ուսումնասիրողների, վիճակագրողների միջոցաւ, ենթարկելով հարցափորձի միլիոնաւոր ընտանիքներ, ուսումնասիրելով հարիւրաւոր գաւառներ, տասնեակ հազար գիւղեր։ Սակայն, այս տեսակ ուսումնասիրութիւնը ևս վեր է մեր ուժերից՝ թէ պատրաստւած ուսումնասիրողների և թէ պահանջւած դրամական միջոցների բացակայութեան պատճառով։

Ամերիկայի Միացեալ Նահանգների վիճակագրական բիւրոն, ինչպէս և երկրագործական նախարարութիւնը Ռուսաստանում տարւայ բերքին, ինչպէս և հիմնական վիճակագրութեան վերաբերեալ շատ հարցերի մասին տեղեկութիւնները ժողովում են գիւղում ապրող, օրինակելի տնտեսութիւն ունեցող և վստահութեան

արժանի անձերից, որոնք հաղորդում են տեղեկութիւններ իրենց կալուածքների մասին։ Սակայն, օրինակելի տնտեսութիւնները շատ բարձր են միջակ տնտեսութիւններից և գաղափար չեն տալիս երկրի իսկական կացութեան մասին։

Մնում է մեզ կանգ առնել այլ ձևի վրայ։ Այդ այն ձևն է, մեր կարծիքով նա, որպէս զի ուսումնասիրութիւնը կատարւի ոչ-ժասսայական, այլ ընտրովի՝ տիպիկ միջակ գիւղերի և այդ գիւղերում գտնւած տիպիկ մի քանի ընտանիքների վերաբերմամբ։ Յատուկ վիճակագրերի տեղ՝ մենք յոյս ենք դնելու մեր այն գիւղերում կամ կարճ ժամանակով այցելութիւններ կատարող սակաւաթիւ ոյժերի վրայ, որոնք հետաքրքրւում են տնտեսական հարցերով ու ժողովրդի կեանքով և որոնք կը ցանկանան իրենց ժամանակի մի փոքր մասը նուիրել մեր ձեռնարկած գործին։

Մենք որոշ հիմքեր ունենք կարծելու, որ այս մեթոդով ու միջոցներով նոյնպէս կարող կըլինենք հասնել բաւարար հետևանքների, եթէ միայն ուսումնասիրողները գիտակցեն, որ մասնագէտների հմտութիւնը նրանք կարող են փոխարինել միայն իրանց եռանդով ու աշխատասիրութեամբ։

Ահա՝ մի քանի խորհուրդներ, որոնց հետեւելը, կարծում ենք, օգտակար կը լինի ներքևի ցուցակներում բերւած հարցերին բաւարար պատասխան առնելու համար։

ԳԻՒՂԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԻՍ

ա). Ամեն մի շրջանում աշխատելու է ընտրել տիպիկ գիւղեր՝ մի գիւղ ամեն մի 5—10—15 գիւղերից։ Լեռնային բազմապիսի վայրերում մի գիւղ ուսումնասիրելիս ընտրելու է միջակ դիրք ունեցող գիւղերից մին, բայց աւելի լաւ է, բացի դրանից, ուսումնասիրել մի այլ գիւղի բարձր լեռնային դիրք ունեցող գիւղերից և 3-րդը ցած—դաշտային գիւղերից։ Բազմացեղ շրջաններում աշխատելու է հայի գիւղի հետ համեմատութեան դնել ոչ հայ՝ թուրք, վրացի, ռուս, քուրդ և այլ գիւղերը։ Եթէ շրջանում կան գիւղեր տարբեր հողատիրական—իրաւական դրութեամբ՝—պետական հողերի վրայ հաստատւած, բէգական, ժամանակաւոր պարտաւորեալ (նախկին ճորտական), կապալով հողի վրայ ապրող և այլն,—համեմատելու է այդ գիւղերը միմիանց հետ, որպէս զի պարզւեն հողատիրական զանազան ձևերից առաջացած տարբերութիւնները։

Ցանկալի է ընտրել այնպիսի գիւղեր, ուր բոլոր ապրողները միատեսակ հողատիրական պայմաններում են գտնւում, մի ազգից են և այլն, Բայց եթէ դա դժւար է և ուսումնասիրող գիւղում կան տարբեր—տարբեր կարգի գիւղացիներ, աւելի լաւ է ամեն մի կարգի գիւղացիների դրութիւնը պարզել զատ-զատ, առանձին-առանձին հարցաթերթերով։

բ) Ուսումնասիրող գիւղը գալուց առաջ ծանօթ է լինելու այն տեղեկութիւնների հետ, որոնք արդէն գոյութիւն ունեն գիւղի մասին։ Գիւղ հասնելուց յետոյ նախ կազմելու է ընդհանուր գաղափար գիւղի կացութեան մասին։ Շրջելու և դիտելու է գիւղը, սրա-նրա միջոցաւ պարզելու է գիւղական տնտեսութեան այն կողմերը, որոնք նոր կամ շատ աղօտ են ուսումնասիրողի համար։ Յետոյ արդէն դիմելու է տեղեկութիւններ ժողովելուն որոշ սիստեմով։ Տեղեկութիւնները ժողովելու է ոչ թէ մի անձից, այլ մի քանի, որպէսզի մէկը ուղղէ միւսի սխալը, չափազանցութիւնները։ Լաւ է, որպէսզի այդ անձերը լինեն գիւղում գոյութիւն ունեցող տարբեր-տարբեր թաղերից, զանազան թայֆայութիւններից, տարբեր կարողութիւն ունեցող խաւերից։ Յամենայն դէպս պատասխան տուողները պէտք է վստահ լինեն առաջուց, որ ժողովւող տեղեկութիւնները չեն ծառայեցւելու չար մտքով, և դրանցից օգտւելու են զուտ գիտական տեսակէտով։ Երբ որոշ հարցի գիւղացիք չեն կարող պատասխանել, կամ ակներև կերպով նրանք ուզում են մթնեցնել հարցը, լաւ է հարցը բաց թողնել, մինչև որ կը յաջողւի նրան բաւարար պատասխան ստանալ մի այլ անձից, նոյն իսկ այլ գիւղում։

գ) Քանի որ թէ մեր ուսումնասիրողների մեծամասնութիւնը փորձւած չէ և թէ հարցերին պատասխան տուող գիւղացիք իրենք շատ անգամ անկարող են ճիշտ պատասխան տալ մի քանի կարևոր հարցերի մասին, (սնունդի, բերքի քանակի, ցանւող հողերի տարածութեան և այլն և այլն), աւելի նպատակայարմար է՝ նախ քան գիւղը ուսումնասիրելը, կազմել նոյն գիւղի տիպիկ ընտանիքների բիւդջէները... Ճիշտ և լրիւ կազմւած բիւդջէները կը լինեն ուսումնասիրողի համար որոշ ուղեցոյց գիւղի ընդհանուր վիճակին վերաբերեալ թւերը որոշելու համար։

դ) Տեղեկութիւններ ժողովելիս մտածելու է ոչ այնքան

քանակի, որքան որակի մասին։ Մի գիւղի, մի ընտանիքի վերաբերեալ տեղեկութիւնները—բայց լրի՛ւ ու ճի՛շտ տեղեկութիւնները—աւելի արժէք ունեն, քան թէ հինգ գիւղի, հինգ ընտանիքների վերաբերեալ թուերը, ժողոված շտապ ու թերի կերպով։ Ուստի, ցանկերում բերած բոլոր կէտերի մասին առաջարկելու է հարցեր։ Սրա հետ միասին մոռանալու չէ երբէք, որ ներքևում բերուած հարցերը անկարող են, ֆիզիկական անկարող՝ բաւարարութիւն տալ տնտեսական ճիւղերը շօշափող կեանքի բոլոր հարցերին։ Ուսումնասիրողը ի՛նքը—ժամանակի ու տեղի պահանջի համեմատ—լրացնելու և զարգացնելու է միշտ նախագծի պակասը, մինչև որ նա համոզուած կլինի, որ ընդգրկել է իրականութիւնը իր ամբողջ մեծութեամբ, պարզել է տնտեսական կեանքի երևոյթները ճիշտ չափով։

Հասկանալի է, կարծում ենք, որ յոյս չպիտի դնել յիշողութեան վրայ և կարևորութիւն ունեցող բոլոր տեղեկութիւնները նշանակելու է թղթի վերայ դեռ գիւղից չհեռացած։

ե). Մեծ կարևորութիւն ունի ոչ միայն զանազան գիւղերի մէջ ներկայումս գոյութիւն ունեցող տարբերութիւնները (պատճառների հետ միասին), այլ և այն, թէ ինչ փոփոխութեան է ենթարկուում կեանքը ժամանակի ընթացքում։ Բաւականանալու չէ ցանկի մէջ նշանակուած հարցով՝ թէ «ինչ դրութիւն է եղել 10 տարի առաջ», այլ ձգտելու է պարզել այն փոփոխութիւնները, որոնք առաջ են գալիս ժամանակի ընթացքում առհասարակ. Միշտ օգտակար է հարցեր տալ, թէ ինչ դրութիւն գոյութիւն ունէր աւելի հեռու անցեալում, օր. վերջին պատերազմի ժամանակ (77—78 թ.), ճորտութիւնը վերանալիս (65 թվին) և այլն։

Գալով ցանկերում բերուած հարցերին, առանձին-առանձին ուշադրութեան պէտք է առնել հետևեալ նկատողութիւնները։

I. Աշխարհագրական դիրք։ Գիւղի բարձրութիւնը պարզելու համար օգտակար է ունենալ զինուորական շտաբի 5 վերստական քարտէզից, ուր նշանակուած կայ շատ տեղերի բարձրութիւնը։ Երկաթուղու կայարանները, որոնց բարձրութիւնը յայտնի է, նոյնպէս կարող են օժանդակ դեր կատարել։

II. Ազգաբնակութիւն 1). «Ծուխ», «տուն», «ընտանիք» (կըրճատուած ծ. տ. ը.) ասելիս հասկանալու է իսկական՝ այսօր գոյութիւն ունեցող՝ այսպէս անուանեալ՝ «մատաղ ուտող» ընտանիքները, և ոչ 1886 «կամերալի» ժամանակ ցուցակագրուածները։ Ազգաբնակութեան անդամների թիւը նշանակելու է ճիշտ, հաշուանամարի հիման վրայ և ոչ ընտանիքների թուի համեմատ, քանի որ տարբեր գիւղեր ու ազգեր տալիս են անդամների տարբեր թիւ միջակ ընտանիքների համար, օրինակ՝ նահապետական հայ գիւղերը հաշուում են 7,5,—8,5 անդամ միջին թուով, տնտեսապէս զարգացած հայ գիւղերը միայն 6,—7. վրացի, թուրք ազգութիւնները ունենում են հայերից աւելի սակաւամարդ ընտանիքներ (6—7), ռուսները, գերմանացիները աւելի ևս (4,5—6 հոգի ընտանիքի վերայ)։

2). «Ծնուած» և «վախճանուածներ» նշանակելիս՝ ժամանակ խնայելու համար, կարելի է տղաներին չբաժանել աղջիկներից, թէև բաժան-բաժան գրելը գերագասելի է։ Վերջինս՝ (տղաների և աղջիկների զատ-զատ նշանակելը) հաժարեա անհրաժեշտ է ժահմեդականների՝ մօտ, քանի որ անկիրթ մօլլաները հաշուի են առնում գլխաւորապէս տղաներին...

3). Վերջին տասը (1905—1896) տարիներից զատ, եթէ հընարաւոր է, եկեղեցական տօմարներից ծնուածների ու վախճանուածների մասին հաւաքել նիւթեր շատ աւելի երկար ժամանակի համար, օր վերջի 20—40—50 տարիների. այդ թուերը կլինէին անփոխարինելի՝ զանազան շրջաններում գոյութիւն ունեցող կենցաղավարական պայմանների նպաստաւոր կամ աննպաստ լինելու չափը պարզելու համար։

4). Երբ ազգաբնակութեան աճման տեսակէտից այս կամ այն տարին խոշոր չափով տարբերուում է «միջակից» դէպի լաւը կամ դէպի վատը, այդ տարայ դիմաց նշանակելու է տարբերութեան պատճառը՝ «լաւ բերք», «սով», «հաժաճարակ հիւանդութիւններ» և այլ պատճառներ, որոնք յայտնի են լինելու գիւղացիներին։

III. Լսաւորութիւն կրթութիւն, Գրագիտութեան չափը պարզելիս՝ յետ ընկած գիւղերում աւելի լաւ է հաշուել գրագէտների թիւը, առաջադէմ գիւղերում՝ ուր կրթուածները շատ են, կարելի է բաւականանալ և մօտաւոր տոկոսով (%—% ով)։

IV Հասարակական եւ բարոյականութեան չափի ու փոփոխութեան մասին որոշ գաղափար կարելի է ստանալ շինական դատարանների մատեաններից։ Կանոնաւոր վարուած դէպքում վերջիններիս տեղեկութիւնները—երբ դասաւորուում ու բաժանուում են շրջանների (օր. վերջին հինգ և նախընթաց 5-ական տարիները)—կարող են հանդիսանալ օգտակար ու գնահատելի նիւթ շատ տեսակէտներից։

V. Հողաստիրութիւն 1). Ժամանակաւոր պարտաւորեալ՝ այսինքն Թիֆլիսի ու ԲուԹայիսի նահանգների նախկին ճորտերի մասին նշանակելու է նաև ԹԷ ինչ չափ հող «աղատուելու» ժամանակ (1865-ին) նրանցից կտրուեց։

Նոյն գիւղում անհրաժեշտ է ծանօԹանալ գիւղացիներին վերաբերեալ Уставная грамота-ների հետ։

2). Պետական գիւղերի ունեցած հողերի տարածուԹեան մասին տեղեկուԹիւններ կարելի է գտնել և՛ մի քանի պաշտօնական հրատարակուԹիւններում՝ ա) Матеріалы по изученію экономическаго быта государственныхъ крестьянъ Закавказья, բ). Сводъ данныхъ по землевладенію въ 5-и губ. Закавказья, գ). Памятная книжка по Эрив. губ. за 1906 г. և այլն։

Առաջինը սրանցից՝ բացի փաստական տեղեկուԹիւններից պարունակում է և ուրիշ հետաքրքիր նիւԹեր, որոնք վերաբերում են պետական հողերի վրայ ապրող գիւղացիներին, այսինքն գիւղացիների այն կարգին որոնցից կազմւած է հողագործուԹեամբ պարապող հայերի ճնշող մեծամասնուԹիւնը։

3). Վարելահողերի ու խոտհարքների տարածուԹեան մասին շատ ճիշտ գաղափար տալիս են գիւղական «հողերի մատեանները», որոնց հիման վրայ գրւած է առհասարակ հարկերի բաժանումը։ Այդ գրքերից օգտուելու է անպատճառ, ստուգելով սակայն առաջուց ինչ չափ է ներկայացնում (դեսեատինի հաշուով) տոմարում յիշատակւած «սոմարը», «խալւարը», «Թոկը» և այլն.

4). Անտառները, արօտները անպէտք հողերը մեծ մասամբ խառն են լինում միմիանց հետ։ Այդ կարգի հողերի տարածուԹիւնը նշանակելու է զատ-զատ «մօտաւորապէս», յենւելով գիւղացիների կարծիքների վրայ։

5). Սաժէնի տեղ նշանակելու է դեսեատինի տասերրորդական մասեր, դեկավարւելով հետեւեալ ցանկով, որ ցոյց է տալիս, ԹԷ քանի՞ սաժէնը դեսեատինի որ մասին է հաւասար՝։

սաժէն դես.	սաժէն դես.
0— 119=0,0	1320—1559=0,6
120— 359=0,1	1560—1799=0,7
360— 599=0,2	1800—2039=0,8
600— 839=0,3	2040—2279=6,0
840—1079=0,4	2280—2400=1,0
1080—1319=0,5	

Հողերի տարածուԹիւնները նշանակելու է պաշտօնական

դեսեատինով՝ որ ունի 2400 քառ. սաժէն (80×30, 60×40, կամ 24×100 սաժէն և այլն). ԵԹԷ դա շատ դժւար է Թւերը կարելի է գրել և տեղի սովորական հաշուով, նշանակելով անպատճառ ԹԷ ինչի՞ է հաւասար տեղական չափը՝ խալւարը «Թոկը», օրավարձը։ Յիշելու է որ վերջիններս տարբերրում են ոչ միայն զանազան գիւղերում, այլ և միևնոյն գիւղի զանազան հանդերում. դաշտի գուԹանի օրավարը, որ հաւասար է լինում 1600—1800 սաժէնի արխը 1000—600 ի և այլն։

6). Հողաբաժնի տարածուԹեան վերաբերեալ հարցում կայ երկու հիմնական կէտ՝ «հողաբաժիններ հիմայ» և «հողաբաժ. 10 տ. առաջ»։ Վերջինս պարզելու համար՝ կամ վերցնելու է հին պաշտօնական տեղեկուԹիւնները (պլանների կամ 1886 Թ-ի հետազօտուԹիւնների), կամ գիւղացիներին առաջուց մաս-մաս հարցեր է տալու.—«Քանի՞ դեսեատինով աւելացել է վերջին 10 տ. ընԹացքում տանտեղերը», կամ «բանջարանոցները», «վարելահողերը» և այլն, որոնց աւելացումով բնականաբար պակասում է հողերի այն մասերի տարածուԹիւնները, որոնցից առաջիններս վերցնւում են։

VI. Հողի ձեռքից ձեռք անցնելը 1). ԵԹԷ գիւղացիների հողերի մեծ մասը կապալառուական է, յիշել պայմանագրի բոլոր կարեւոր կէտերը առանձին ԹղԹի վրայ, որը և կցել հետազօտուԹեան։

2). Հողերը կապալով տալու և վաճառելու դէպքում՝ շատ կարեւոր է պարզել, ԹԷ գիւղացիների ո՞ր մասը, արդեօք, այդ իր հողերը յանձնել է ուրիշին կարիքից, և ո՞ր մասը այն պատճառաւ, որ հողի տէրը ունի աւելի արդիւնաւէտ աշխատանք (արհեստ և այլն) և ինքը չի ուզում պարապել հողագործուԹեամբ։

VII. ՀողագործուԹեան տեխնիկային ծանօԹանալու համար անհրաժեշտ է մանրամասն գրել, ԹԷ այսինչ մշակուԹեան համար ե՞րբ և ի՞նչ աշխատանքներ են կատարւում և վերջը հաշուել ԹԷ որքան ծախս է պահանջում այդ բերքը և որքան եկամուտ տալիս։ ԶուգընԹացաբար կարելի է իմանալ ԹԷ ինչ փոփոխուԹիւններ են առաջ եկել ժամանակի ընԹացքում աշխատանքի այս կամ այն ճիւղում։

VIII. Ոռոգման ժամանակ կամ բահ, կամ «բաշ» ջուրը կոչւում է ջրի այն քանակուԹիւնը որը բռնում է մի բահի տարածուԹիւն և որով հարԹ տարածուԹեան վրայ կարելի է ազատ ջրել հողերը։ Աւելի ճիշտ «բահը» հաւասար է մի լիտր (մի խորանորդ մետրի $\frac{1}{10.000}$) ջրին, որ հոսում է մի վայրկեանի ընԹացքում։

IX. Յանքսի եւ բերք։

1. Յանքսի և հնձի ժամանակ նշանակելիս ի նկատի է ունենալու այդ աշխատանքների սկիզբը, որը և նշանակում է ամիսների անուն տեղ համապատասխան լատինական թուերով՝ օր. ապրիլի սկիզբ գրելու տեղ—սկ. IV; Յուլիսի կէսի տեղ՝ 15 VII և այլն—

2. Այն վայրերում, ուր ցանքսի ու բերքի չափը հաշուում են սովորաբար քաշով (խալւարով, սոմարով և այլն), ընդհանուր հաշուեցութիւնը ևս կարելի է անել այդ ձևով համապատասխան կերպով հարկաւ և ցանկի վերնագրերը։

3. Բերքի քանակը (թէ մի դեսեատինից, թէ ընդհանուր քանակը) վերաբերում է միջակ տարուն (և ոչ լաւ կամ վատ տարիներին)։ Սա չի վերաբերում ի հարկէ «մի դեսեատինից ստացուող ամենաբարձր բերքի» քանակին, որը վերաբերում է բացառիկ յաջողակ տարուն։

4. Միջակ սնունդի չափը, բերքի ընդհանուր քանակի վերաբերեալ թուերը, ինչպէս և արժէքը, հետաքրքրողը նշանակելու է տանը և ոչ գիւղացիների ներկայութեամբ. շատ տարբերւում է թէ զանազան ազգերի համար, թէ այլ հարստութիւն ունեցող ընտանիքների, թէ տարբեր զանազան եղանակների համար։ Հողագործները սպառում են 15-ից մինչև 24 և աւելի փութ անձի վերայ թափառականները 1—12 փ, աղքատ հայերը 12—15 փ, ունևորները միջև 25—30 և այլն...

X, XI, XII, XIII, XIV 1. Գլուխներում խառը կերպով յիշած տեսակների գրած տարածութիւնը լաւ է որոշել տօկօսներով, կամ տասի մասով, որ կը նշանակէ թէ այսինչ տեսակը բռնում է ընդհանուր տարածութեան այսինչ (0,2, կամ 20%) մասը։

2. Ամենակարևորը ի հարկէ այդ ճիւղերի տուած միջակ տարուայ ընդհանուր եկամուտն է թէ քանակով, թէ արժէքով, որը կարելի է պարզել առանց մեծ դժարութեան, ձեռքի տակ ունենալով մի քանի տարբեր կացութիւն ունեցող ընտանիքների հաշուեկշռը...

3. Եթէ ուսումնասիրուող վայրում այդ ճիւղերից ամէն մէկը ունի կարեւոր նշանակութիւն, ուսումնասիրողը կանգ է առնելու այդ ճիւղի վերայ մանրամասն կերպով, նկարագրելով թէ այս ճիւղի տեխնիքան և թէ պահանջած աշխատանքն ու տուած եկամուտը։

XV Արօտների—խոտ-հարքների քանակն ու որակը որոշում է կողմնակի կերպով (յարդի հետ միասին) թէ ինչքան անասուն

կարելի է պահել այդ հողերի վերայ։ Թէև խոտհարքներն ու արօտները շատ ու շատ տարբերութիւն ունեն միմիանցից և ոչ մասնագէտին դժուար է մտնել այդ հաշիւների մէջ, յամենայն դէպս աւելորդ չէ յիշել այստեղ, ինչքան է հաշուում խոտի բերքը մի դեսեատինից.

Ջրովի, ցանովի, պարարտեցուած խոտհարքներից՝	300—400 փութ.
Ջրովի, բացցող ցանովի ու ոչ պարարտացուած . . .	200—300»
Ոչ ջրովի, ցանովի միջակ խոտհարքներից	150—200»
Ոչ ջրովի բնական » »	100—150»
Արօտներից միջակ	50—100»
Յարդ՝ մի դեսեատին միջակ բերքից. . . .	70—90»

Սրա հետ միասին ի նկատի ունենալով։ որ տարեայ ընթացքում միջակ մեծատաւարի վերայ հաշուելու է մօտ 150 փութ կեր (որից մօտ կէսը կանաչ, կէսը չոր), որ միջակ մեծատաւարը հաւասար է 5 ոչխարի ու այծի, $2^1/_2$ խոզի, 1 ձի, էշ, ջորու,—կարելի է մօտաւոր գաղափար կազմել թէ որչափ բաւարար սնունդ ունի այս կամ այն գիւղը իր սնուցած անասունների համար։

XVI. Եթէ ոչ ամեն մի ուսումնասիրուող գիւղում, գոնէ ամեն մի շրջանում և ամեն մի ուսումնասիրողի հարկաւոր է կազմել անասնապահութեան գլխաւոր ճիւղին վերաբերեալ մի հաշիւ, որից պարզուէր թէ ինչ ծախս են պահանջում այդ անասունները և ինչ տեսակի և ինչքան եկամուտ բերում։ Նայած անասունին հաշիւը անելու է կամ մէկի վերայ (կով, գոմէշ), կամ հարիւրի (ոչխար, խոզ և այլն)...

XVII. Դրսում աշխատողների մասին որոշ գաղափար կարելի է կազմել շինական վարչութիւնից վերցուած անցագրերի ցանկից, որը տարիների ընթացքում ենթակայ է փոփոխութեան։ Գերադասելի է օգտուել 10—15 տարուայ տեղեկութիւններից։ Այն գիւղերում, ուր դրսի աշխատանքները խաղում են խոշոր դեր, դրանց վերայ կանգ է առնելու մանրամասն կերպով, զետեղելով այդ տեղեկութիւնները առանձին թերթի վերայ։ Հետևելու է նրան, թէ ինչ չափով կեղեքւում են աշխատաւորները, ինչ միջոցով կարելի է վերջ դնել այդ կեղեքման և որչափ կազմակերպուած են գիւղական բանուորները։

XVIII. Արհեստներից մանրամասը նկարագրել այն ճիւղը, որը բնորոշ է այս վայրի համար, իսկ միւս վայրերում խաղում է երկրորդական դեր։

XIX. Ցնայնագործութեան ճիւղերից ստացած եկամուտը բա-

ժանելու է երկու մասի՝ այն մասը որ ստացւում է դրամով (վաճառելով մթերքները) և նա որը գործ է ածւում տան պէտքերի վրայ։

Մանրամասը կանգ առնել ընորոշ տիպիք ճիւղերի վերայ։

XX Պարտքերի քանակի, և մանաւանդ ձևերի մասին որոշ գաղափար կարելի է կազմել շինական դատաւորների արձանագրութիւններից։ Մոռանալու չէ սակայն, որ վախենալով հալածանքից տոկոսի չափը շատ անգամ կեղծ է նշանակւում։

Արձանագրել վաշխառութեան օրինակներ։

XXI. Կարողութեան ասիճաններ Այն գիւղերում, ուր հողաբաժանումը կամ հարկաբաժանումը համփաչարեքի վերայ է, ժամանակ առ ժամանակ գիւղերում կատարւող ընտանիքների դասաւորումը տալիս է որոշ գաղափար գիւղերում առաջ եկող հարստութեան «կենտրոնացման» կամ ապակենտրոնացման։ Միւս գիւղերում բաւարար պատասխան կարելի է առնել միայն հմուտ և գիւղական կեանքը դիտող անձերից։

XXII—XXIII Հասարակական եկամուտներ եւ տուրքեր նշանակելու է ոչ միայն պաշտօնական (գրագիրների տուած) տեղեկութիւնների հիման վերայ, այլ և հարց ու փորձից։ Կամ «մզապրաֆներ» (մանր ոչ պաշտօնական ծախքեր պաշտօնեաների «հիւրասիրելու» համար և այլն) որոնք բաւականին շօշափելի դեր են խաղում։ Ուշադրութիւն է դարձնելու մանաւանդ «ոչ արդիւնաւէտ» ծախքերի վերայ.

XXIV. Հաւաքական—ընկերական ձեռնարկների մասին խօսելիս. ի նկատի է առնելու այն հանգամանքը, որ դրանցից մի մասը խոր արմատ է ձգած ժողովրդի մէջ իբրև մնացորդ կամ աղաւաղած հետք անցած կոմմունական—հաւաքական կեանքի։

2. Այն համագործակցութիւնների մէջ (օր. գութանի կազմի) ուր կայ և կապիտալ և աշխատանք։ Հետաքրքիր է պարզել արդեօք դրանք երկուքն էլ միացած կերպով են վարձատրւում.

3. Կանգ է առնելու գլխաւորապէս այն տեսակ ընկերական ձեռնարկների վերայ, որոնք և ձեռնտու ու օգտակար են տնտեսական տեսակէտից և իրագործելի են գիւղացի հասարակութեան զարգացման ներկայ շրջանում, ի նկատի ունենալով գիւղում ապրող ձեռնհաս ու վստահութիւն վայելող վարիչ անձնաւորութիւնները...

XXV. Այլ եւ այլ նկատողութիւնների մէջ մտցնելու է այն ամենը, ինչոր չի մտած վերևում, բայց որը լուսաբանում, կամ լրացնում է գիւղացու տնտեսական կեանքը.

Վերևում բերած խորհուրդները թէև ունին ընդհանուր գոյն, բայց վերաբերում են գլխաւորապէս գիւղերի հարցացուցակին։

Ընտանիքներ ուսումնասիրելիս բացի վերի յիշած խորհուրդները ի նկատի է ունենալու. նաև հետևեալ նկատողութիւնները։

ա. Ընտանիքների ուսումնասիրութեան ամենանպատակայարմար միջոցը այդ ընտանիքների բիւդջեներ կազմելն է։ Բիւդջէն կազմելիս ամենամանրամասն հաշի է առնւում ոչ միայն ընտանիքի ամբողջ ունեցած-չունեցածը, այլ և տարւայ ընթացքում նրա ստացած ամբողջ մուտքը և ունեցած ամբողջ ելքը, թէ մթերքով, թէ դրամով։ Տարին սկսել կարելի է գիւղացիների համար ամեն մի որոշ օրից, ում է ակնյայտնի ոնից։ Բայց աւելի լաւ է հաշի սկիզբ ընդունել մի մեռած շրջան՝ աշնան վերջը, գարնան սկիզբը. նոր տարին։

բ. Ուսումնասիրւող ընտանիքները լինելու են տիպիկ, այսինքն այդ ընտանիքները գաղափար են տալու տեղի տնտեսութեան ամենատարածուած ու ամենակարևոր ճիւղերի մասին. հողագործական շրջանում այդ ընտանիքը լինելու է պարապող գլխաւորապես հողագործութեամբ, անասնապահական շրջանում—գլխաւորապէս անասնապահութեամբ, խառը տնտեսութիւն ունեցող գիւղերում ընտանիքի տնտեսութիւնը ևս ունենալու է խառը գոյն։

Երբ գիւղում կազմւում միայն մի ընտանիքի բիւդջէ, այդ ընտանիքը լինելու է տիպիկ միջակ ընտանիք. միջակ իր անդամների թւով, միջակ իր կարողութեամբ, ստացւող եկամուտով, այսինքն լինելու է մի ընտանիք, որ սահմանափակ չափով է օգտւում վարձւող աշխատաւորներից և ինքն էլ ծանրաբեռնուած չէ խոշոր պարտքով, հարկադրւած չէ դրսում երկար աշխատել։

Երբ կայ հնարաւորութիւն իսկ խոշոր գիւղերում, դա հաժարեայ անհրաժեշտութիւն է—ցանկալի է միջակ ընտանիքից շատ ուսումնասիրել նաև այլ կարգի ընտանիքներ, չքաւոր, ունևոր, արհեստով պարապող և այլն.

գ. Ընդհանուր կարողութեան ցանկը կազմելիս—ժամանակը խնայելու համար—լաւ է միաժամանակ նշանակել և այդ ճիւղի վերայ տարւայ ընթացքում ունեցած ծախսը, ուղղակի հարց տալով «ինչքան է ծախսւած տարւայ ընթացքում այս ինչ իրի գնման ու նորոգելու համար», յիշեցնելով այսպիսով հարստութեան ամեն մի ճիւղի մասին գոյութիւն ունեցող փաստերը։

դ. Եկամուտը և ծախքը նշանակւած է մթերքով, այսինքն այնպէս, ինչպէս այդ եկամուտը ստացւում է իրականութեան մէջ

և դրամով, այսինքն մթերքի այն մասով, որը վաճառւում և դրամի է վերածւում։ Հսկելու է, որպէս զի դրամով ստացուած եկամուտը դուրս հանւի մթերքով ստացուած եկամուտից և որպէս զի այդ երկու ձևի մուտքերը կազմեն ընդհանուր մուտքի իսկական գումարը։

ե. Մարդիկ առհասարակ և մանաւանդ միշտ կեղեքուած գիւղացիք տրամադիր են աւելի յիշելու իրենց ծախքերը, քան թէ եկամուտները. այդ պատճառով հաշւելով նախ ծախքերի գումարները (թէ մթերքով, թէ դրամով) անպատճառ գտնելու է և նրանց համապատասխան եկամուտի աղբիւրներ (մթերքով և դրամով)։ Հաշւեկշեռը (բալանսը) չը կազմելու դէպքում իրենք գիւղացիք հրաւիրւելու են օգնութեան և (ցանկացած դէպքում) անպայման կը գտնեն վերևում թոյլ տուած իսկականից բարձր ծախքերը կամ իսկականից ցած եկամուտները։

զ. Յամենայն դէպս ի նկատի է ունեցւելու, միշտ, որ տարուայ եկամուտները ու ծախքերը կարող են միմիանց չը համապատասխանել նախ այն պատճառով որ հաշւի առնւող տարին հաւանական է որ միջակ տարի չը լինի, հետևապէս կամ մուտքը կլինի բարձր կամ ծախքը։ Բայց, այն իսկական միջակ տարին հաշւեկշռի սխալներ կարող են առաջ գալ այն բնական պատճառով որ գիւղատնտեսութեան մէջ որևէ կատարած աշխատանք (ծախս) անդրադառնում է ոչ միայն նոյն տարուայ եկամուտի, այլ և եկող և նոյն իսկ հինգերորդ տարիների։...

Յամենայն դէպս, եթէ լուրջ կերպով աշխատւի, ելքի ու մուտքի իսկական հաշւեկշռը կը կազմւի առանց խոշոր դժուարութիւնների։

Ի վերջոյ, աւելորդ չէ յիշեցնել հետաքրքրւողներին, որ այս նախագիծն ու հարցացուցակները կազմելիս հեղինակը օգտուել է ա) Մոսկուայի և Տաւրիկեան նահանգական զեմստվօների ծրագրերից։ բ) Ս. Վլեցկու «земская статистика» հեղինակութիւնից։ գ) պ. Էյրանեանի կազմած մի ձեռագրից. ե) Կովկասի տնայնագործական կոմիտէի տպագրած բիւջէի բլանկից և ե) Ս. Զաւարեանի ունեցած մի քանի նախագծերից։ Աւելի մանրամասն բացատրութիւններ ցանկացողները կարող են դիմել վերևում յիշուած աղբիւրներին։

Թէ նախագծին և թէ հարցացուցակներին վերաբերեալ ամեն տեսակ նկատողութիւններ կընդունեն շնորհակալութեամբ։

Ժողովւող նիւթերը ամփոփելու, դասաւորելու և որոշ եզրակացութիւնների հասնելու համար, հետազօտողներից խնդրհաբար խնդրւում է գրւած հարցերին պատասխաններ նշանակելուց յետոյ հարցացուցակները (կամ նրանց լրիւ պատճէնները) ուղարկել Թիֆլիս պ. Սիմէօն Զաւարեանի հասցէին։ Ժողոված նիւթերից որևէ աշխատութիւն տպագրելու դէպքում, աշխատակից ընկերները չեն մոռացւի և կստանան մի-մի օրինակ։

Ս. Զաւարեանց.

200
13373

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	տող	Տպագրուած է.	պէտք է լինի
4	3 վեր.	տետրակով	տետրակներով
6	10 »	գիւղերում կամ կարճ	գիւղերում ապրող, կամ
8	7 »	ֆիզիքական	ֆիզիքապէս
9	12 »	զատ-շատ	զատ-զատ
11	8 »	արխը 1000-600	սաբինը 1000-600
11	11 ներք.	այս ինչ մշակութեան	այս ինչ բերքի մշակութեան
11	5 »	ժամանակ կամ բահ	ժամանակ բահ, կամ
12	2 վեր.	հնձի ժամանակ	հնձի ժամանակը
12	10 »	կերպով հարկաւ	կերպով փոխելով. հարկաւ
12	16-18 »	. . բերքի ընդհանուր քանակի վերաբերեալ թւերը, ինչպէս և արժէքը, հետազօտողը նշանակելու է տասը և ոչ գիւղացիների ներկայութեամբ	ամբողջութեամբ տեղափոխելու է IX գլխի վերջը
12	17 ներք.	1—12 փ.	10—12 փ.
»	16 »	ունեորները միջև	ունեորները մինչև
13	7 վեր.	բայց ցող ցանովի	բայց ոչ ցանովի
14	13 »	ապակենտրօնացման	ապակենտրօնացման մասին
»	18 »	կամ մզսարաֆներ	կան մասրաֆներ
»	10 ներք.	աշխատանք, Հետաքրքիր է	աշխատանք, հետաքրքիր է
»	9 »	երկուքն էլ միացած	երկուքն էլ միատեսակ
»	8 »	ձնոարկների վերայ	ձեռնարկների վերայ
15	10 »	շատ ուսումնասիրել	զատ ուսումնասիրել
16	15 վեր.	նկատի է ունեցւելու	նկատի է ունենալու
»	19 »	բայց, այն իսկական	բայց նոյնիսկ իսկական
»	18 ներք.	աւելորդ չէ յիշեցնել	աւելորդ չէ յիշել
»	9 »	ցուցակներին վերագրեալ	ցու[illegible]
»	5 »	խնդրւում է	խնդր[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0124062

14716